

ԳԱՆԻՆԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐԸ»

ԱՂԻՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ընթերցող հասարակությունը առաջին անգամ 1904 թ. ծանոթացավ Դանիել Վարուժանի անդրանիկ ստեղծագործությանը. «Բազմավեպում» տպագրվեց նրա «Բանաստեղծ Նահապետին չիրիմին առջև» բանաստեղծությունը: Երկու տարի անց՝ 1906 թ. Վենետիկում լույս տեսավ արդեն Վարուժանի երկերի հավաքածուն «Սարսուռներ» խորագրով: Այնուհետև հաջորդաբար հրատարակվեցին՝ «Ջարդը» (1907), «Ցեղին սիրտը» (1909), «Հեթանոս երգեր» (1912), իսկ 1921 թ.՝ «Ետմահու»՝ «Հացին երդը» ժողովածուները:

Մեր ուսումնասիրության անմիջական առարկան Դ. Վարուժանի «Հեթանոս երգերն» է, որը գրականության պատմության մեջ իրավամբ արժեքավորվում է որպես Վարուժանի ստեղծագործության գերազանց արդասիր:

Ժողովածուն կազմված է երկու բաժնից. «Հեթանոս երգեր» և «Գողգոթայի ծաղիկներ»:

«Հեթանոս երգերի» ընդհանուր բովանդակությունը հեթանոսական անցյալի, աստվածական դարերի և պայքարով լեցուն, վառ ապագայի հույսերով հղի ներկայի ներքոյն է: Հիասթափված իրականությունից, ուր ճնշված էր ազատությունը, վաճառվում բարոյականությունը, հարստահարվում խիղճը, բանաստեղծը հեռավոր անցյալի, դուրացական դարերի մեջ տեսավ անաղարտ զգացումներ, կենսուրախ կյանք, վայելք, սիրտ և գեղեցկության հաղթանակ: Վարուժանը ներքողեց ասպետներին, ողբաց և հեթանոս աստվածներին մահը («Մեռած աստվածներուն»), որովհետև նրանցից հետո սոցիալական շարիքներն ու կյանքի դաժանությունները ամայացրին, արյունոտեցին բնությունը, շորացան անտառներն ու ծովերը, բնկավ մարդկային հոգին ու խորհուրդը:

Մեռավ խորհուրդն. և Բնությունն է արյունն՝

Օրենքներու կարկինին սուր սրլաբով:

Ջանձրույթը մնաց, պրճնրված փուշ պրսակով:

Մարդն է ինկած գարշապարին տակ հրակա

Խուլ Աստուծո մը հրեա:

«Խուլ» է աստված՝ մարդկային տառապանքներն ու վիշտը, հարստահարությունները, զրկանքն ու շարաշահումները անպատիժ թողնելու համար: Վարուժանը հեթանոս աստվածներին հակադրել է քրիստոնյա աստծուն և մերժել մարդուն ստրկացնող ու կաշկանդող քրիստոնեական օրենքները: Բանաստեղծը գովերգում է հեթանոս աստվածներին, նրանց սերը, կենսախիղ տոներն ու խրախճանքները, որոնք հագեցած են կյանքով և ուրախությամբ: Մինչդեռ հավատի և արդարության խորհրդանշը քրիստոնեական «խաչը» իր «արյունափառ» թևերով միայն թախիժ է սփռել «աշխարհի վրա բովանդակ»:

Վարուժանը ստեղծագործ էրեակայությամբ թափանցել է դարերի մշտնի մեջ և անհետացած մի աշխարհ հակադրել ճշման ներկային, «Հեթանոս երգերում» արտացոլված է հեղինակին ժամանակակից կյանքը իր հակասություններով ու բազմակողմանի ընդդրվածներով:

Առաջին բանաստեղծությունը («Գեղեցկության արձանին») երկրպագումն է գեղեցկին, որից անմիջապես հետո բանաստեղծը դիմում է գինու և արգասաբերության հայտը հեթանոս աստված Վանատուրին, հանձին որի հեղինակը ողջունում է հողը, ծիր, ծաղիկը, միջատները, այսինքն՝ կյանքի վերականգանությունը, բնության փթթումը: Ողջունում է գարնան կենսաբանական սկիզբը, ուր հեղինակը երգում է վանատուրին, որն իր գոյությունը պահպանած միակ աստվածն է, որովհետև նա մարմնավորումն է կյանքի:

«Հեթանոս երգերի» այս բաժնի հիմնական մոտիվը իրականությունից հեռու անձնատուր դառնալն է կյանքի վայելքին, բոնկվող ու կրքոտ սիրուն, կնոջ հրապույրներին: Սակայն դա լուրջությամբ, հասարակական դավանանքից զուրկ մարդու փախուստ չէ: Վարուժանի դարձը դեպի դարերի խորքը յուրովի բողոք է իրականության դեմ, և նրա քնարի մեջ ուժգնություն է հնչել հասարակական մոտիվը, քննադատությունը «ոսկու» իշխանության, որ ամեն ինչ սեր, հրապույր, պատիվ վաճառքի առարկա էր: Բանաստեղծը ատում է դահլիճների «փարթաժ կիները», որոնց կավատն է «ոսկին»: Հեթանոս դարերի անկեղծ և անկաշառ սերը քարձր է, քան ժամանակի ծախու սերը և բանաստեղծի խաբված զգացմունքները սփոփվում են «ոսմիկ» աղջկա՝ Տալիթայի հրապույրներով:

Ինձ ի՛նչ փույթ թե շրթունքներդ են խածեր
 Եավատիները կոպիտ,
 Եվ հոսեր են քրրտինքն իրենց տըրփանքին
 Աչքերուդ մեջ ու ծոցիդ:

Այսօր կ'ուղեմ կուրծքիդ վըրա գինովնալ
 Ինչպես գինվոր մը արբուն,
 Ի՛նչու եմ պարպել դավաթդ, և դուն ալ պարպես
 Սիրտըս՝ նուռի պես հասուն:

Բազմալար է Վարուժանի բնարը: Նա ելուց է հեթանոս աստվածուհի Անահիտին («Անահիտ»), խոսվածույց ու կրքոտ կլեոպատրային («Կլեոպատրա»), ներբողել է հեթանոսական սուրբի խրախուսանքն ու սերը («Հեթանոսական»), զովերգել Ադրիականի նազելաշուրթ թագուհի Վենետիկը («Վենետիկ») և բնության անհունության մեջ անաղարտ պահված հովվուհուն («Գրգանք»): Հեռու կյանքի մաշող ժխտիչ ու տառապալից առօրյաից, լճակի ափին, մենավոր տնակում բանաստեղծը յապաստում է իր սիրելի հովվուհուն, որին ողջունում են երկայնավիդ, սպիտակաթույր կարապները, վարդերի, նունուֆարների բույրը, և արեցած նրանցով՝ զարնանային զարթոնքին, բնության ծոցում, բնության հետ նա հանձնվում է սիրո վայելքին:

Կարապներն ալ թուխս նստան.
 Եղեգնություն մեջ քամին մեղմ նրվազէ.
 Մըլարձակման մեծ օրենքները Գարնան.
 Նունուֆարի հոտված ծղոտները դարձյալ
 Ջուրին մեջեն արձակեցին վթիթներ:
 Մերին արտերն ունկընդիր
 Իրարու մեղմ տըրոփունքին՝ նընջեցին.
 Եվ լիճին խորն, աստղերուն վրա թևամփոփ,
 Կարապներն ալ թուխս նստան:

Նույն զգացմունքների տարրեր արտահայտությունն է «Առաջին մեղքը»: Բնության մեջ, ազատ և անհոգ ապրում է հովվուհին, կապուտաշյա իր ուլի հետ: Մի օր ահա խոսվվում է նրա անբիծ հոգին. լեռների ողին փոթորկում է անմեղ աղջկա անդորրը և նա լսելով բնության ձայնին զոհարերում է ճերմակ ուլը՝ խորհրդանշելով իր անձի անաղարտության, և այսպիսով նա ճաշակում է «առաջին մեղքի» գալթակղիչ հրապույրը:

Ան՝ մահն ի՛նչ էր՝ կ'անդիտանար,— ու երգե՛ց,
 Երգեց բնության ներշնչման տակ մեկն այն մեծ
 Հաճություններն՝ զոր կու տա
 Զոհադործումը անձին:

Բնությունը Վարուժանի համար հաճախ յուրահատուկ ներշնչումների աղբյուր է: Բանաստեղծի այրվող, հախուռն հույզերը չեն մեղմել առավոտյան դեփյուռի սոսափյունները և կամ հաճախացել բազմերանգ վերջալույսի անդորրում: Վարուժանը երգել է բնության ստեղծարար ուժը, նրա անդիմադրելի ներդրությունը մարդկային հոգու և ցանկությունների վրա, ինչպես զարնանային զարթոնքը, ամառային միջօրեի տապը, ոսկյա աշունը և սպիտակասավան ձմեռը:

Աշխատանքի հարուստ բնության մեջ ամեն ինչ շնչում է կենսախնդրությամբ. հասունացած մրգերի արեցնող բուրմունքը սփռված է շուրս դին, արգասաբեր, բեղմնառատ բնությունն է փայլում ճոխությամբ ու փարթամությամբ. ահա այդին «կուլթի» պատրաստ ժիր գերիններով և սեամորթ եթովպուհներով. եռում է կյանքը, եռում է աշխատանքը, որին հեռվից ձայնակցում է հեթանոս քաղաքի տոնական աղմուկն ու խրախճանքի ցնծությունը.

Այն ատեն (թույլ կու տա՞ս ինձ
խոստովանիլ, լալա՛դե)
Ես ունեցա ընդվզումներ արյունի,
Ու ցանկացա արեգակին, հողին պես
Ուռնացրնել ինձ մերձեցող ամեն հունդ.
Ու—թո՛ւյլ տուր ինձ խոստովանիլ, լալա՛դե —
Երբ դուն անդին՝ կարկառուն նուռը ծառին
Կը քաղեիր, ու հետո
Կը խածներիր լիարերան հեշտանքով

Ես ասդին թուխ եթովպուհին — որ չլեբաց՝
Հրնձանին մեջ կը ճըմլեր կուզն —
Համբուրեցի՝ բրնձած հրեղիկ ծամերեն
Պառկեցուցի՝ ժրպտագին գլուխը կուրծքիս,
Եվ հեշտարժուն շրթներով, լալա՛դե,
Համբուրեցի՝

Թանաստեղծի պատկերներն ու մտահղացումները հանդուգն են, ոչ սովորական։ Եվ այս էր հիմնական պատճառը, որ ժամանակին չթափանցելով Վարուժանի արվեստի առանձնահատկության մեջ, շճասկացան նրա խորությունը։ Դանիելյան մարդիկ, որոնք «Ո՞վ լալագեի» մեջ տեսան բարոյական չափանշերի ուտնահարում, ուստի և մեղադրանքի խոսքեր ուղղեցին հեղինակի հասցեին։ Վարուժանը մեծ արվեստագետին հատուկ համարձակությամբ պատուում է քողը մարդու ներաշխարհի, որը հարուստ է գեղեցիկ ու բարձր հույզերով։ Նա, բացի «Ո՞վ է լալագեից», մի շարք այլ բանաստեղծություններում ևս երգել է մարդկային ինտիմ հույզերն ու զգացմունքները։ «Թրհնյալ ես դու ի կանայս...»-ում բանաստեղծը պատկերել է սիրտ ու վայելքի գերազանց պահը, սակայն այն սեկսուալ բնարի սանձազերծ պոթկում չէ, այլ անադարտ սիրտ, սրբազան ներդաշնակության ներբող, պաշտամունք դեպի կինը։

.... Թրհնյալ ըլլաս, Մարիա՛մ,
Դո՛ւն որ անհուն գորովով
Կողերդ ինձի՝ կու տաս, և ո՛սկրդդ՝ ուրիշ
Ոսկրի մ՛համար կը քամես,
Դո՛ւն՝ որ կ'ըլլաս ամենեն
Մարուր ակոսն՝ ակոսներեն բեղմնավոր,
Ու ամենեն չքնաղ թաղարը՝ բոյոր
Թաղարներեն շուշանի՝
Թրհնյալ ըլլաս հավիտյան։
Դո՛ւն՝ որ, ըզգոն, կը կրրես
— Խեփորին մեջ ինչպես մարգրիտ մը ազնիվ —
Աստվածատիպ Մարդը խո՛րն այդ արգանդիդ՝
Թրհնյալ ըլլաս, Մարիա՛մ...

Վարուժանի ստեղծագործության մեջ կան երկեր («Արևելյան բաղանիք» և ուրիշներ), որոնց բովանդակությունը չի ներշնչում բանաստեղծական հույզեր, աղքատ է, պրոզայիկ։ Սակայն, այստեղ ևս հանդես է դալիս հեղինակի ինքնատիպ տաղանդն ու անսահման կարողությունները։ «Արևելյան բաղանիքում» Վարուժանին հաջողվել է ստեղծել նկարչական հրստակությամբ աննման մի կերտվածք, որ պատկերների բազմազանությունը միահյուսված է արևելքի վառ գույներին և յուրաքանչյուր պատկեր ավարտված ամբողջություն է. լինի դա կանանց նկարագրությունը մարմնական հրապույրներով ու գեղեցկությամբ, թե բաղնիքի «տամուկ» օգր, ուր նվաղում են արևելքի հուրիները.

Հուրինները կը լողնան.— Պորտաքարին կիզանուտ
 Ոմանք պառկած նըվաղկոտ նայվածքներով կ'երազեն:
 Լուսացրնցուզ գրմբեթեն՝ արևուն շողը ճերմակ
 Ներս կը մտղվի՝ մարգարտյա հորդ անձրևի մը նրման.
 Եվ ծըփանուտ գոլորշին կը դառնա ծով մ'արծաթյա՝
 Ուր լյուզ կու գան կարապներն Արևելքի Հեշտանքին:
 Ըսպածանին՝ որ կըպած է զիստերնուն լոռի պես,
 Ա՛լ կը նետվի. մարմինները կը փոխվին արձանի.
 Եվ մազերին հյուս առ հյուս, ծովերու պես կը քակեն,
 Ուրկե երբե՛մն կիյնան գոհարներու հատիկներ:

Վարուժանը հաճախ հղկում, մշակում, բանաստեղծական բարձր արվեստի է հասցնում
 կյանքի այնպիսի մի պատկեր, կենցաղի մանրուք, հոգեվիճակի մի երանգ, կանացիական հրա-
 պույրների անհայտ, քողարկված մի անկյուն, որը նրա գրչի տակ կենդանանում է յուրա-
 հատուկ հմայքով: Միշտ չէ, որ հեղինակին գերում են կնոջ կախարդչա՝ աշխարհը, մարդկային աշխարհը
 ատամներն ու երկայնահյուս մազերը: Բազմազան են կնոջ հրապույրները, և բանաստեղծը
 մինչև իսկ ներթոյթյամբ ու քնքշանքով նկարագրել է կանացի «մարգարտածոց» ականջները:

Վարուժանի երգած սերը անբովանդակ, կրքոտ հափշտակություն չէ, այլ մարդկային
 զգացմունքների, հոգեկան հարստության բարձրագույն արտահայտություն, որն այնքան զե-
 ղեցիկ ներկայացված է «Հին սերը» բանաստեղծության մեջ: Ասպետների, դուռնապանների վե-
 ու անձնագոհ սիրո, հեթանոս աստվածների կյանքով ու վայելքով լի սիրո, հովվուհիների անա-
 դարտ և մաքուր սիրո կողքին, Վարուժանը երգել է և ծերունիների երբեմնի սերը: Հոգևի-
 ճակի հարազատ մի պատկեր է այն, ուր հեղինակը բանաստեղծական սեղմ տողերի մեջ, բնա-
 կան գույներով, պատմել է երկու ծերունիների սիրո պատմությունը: Կյանքի երկար ուղին
 կտրելուց հետո, նրանք խոր ծերության հասած՝ նստած են այն ծառի տակ, որի ծաղիկները
 ժամանակին զարդարել էին մամի գլուխը և այդ ծառի հովանու տակ էր, որ պապն ու մամը
 ճաշակել էին առաջին հրապույրը: Անցել են երկար տարիներ, այժմ երկու դողող ծերունիներ
 նստած են կրկին նույն ծառի տակ որպես խոսված հուշեր: Երիտասարդներ, սակայն խավարած է
 նրանց աչքերի փայլը, հանգած ցանկությունների կրակը: Ամեն ինչ անվերադարձ հանձնված
 է անցյալին, և այսօր ծերացած հոգիների մեջ հին սերն է միայն առկա ծով՝ անցյալի վեր-
 հուշերով:

Չունին այլևս հրրդեհումներն արշունին.
 Անոնց հոգին համբույրի երգը չունի.
 Ոչ ալ հոգնած կողերուն մեջ կը ծաղկին
 Սերմերը՝ նման շուշանի:

Ու հիմակ այս գարնանային իրիկունն՝
 Երբ կը բուրեն կինամոնները բլրա՛ն՝
 Կ'իյնա անոնց միտքը հին սերն հանկարծուն՝
 Հին աղոթքի մը նման:

Եվ կը հիշեն, շուրթին տակ նույն ծիրանվուն
 Մեռած գրգվանը, իրենց տարփանքը հեշտին,
 Հետո համբույրն ու ճի՛շը մամուն՝
 Եվ իրարու կը ժպտին...



Վարուժանի դրական ժառանգության մեջ ուրույն տեղ է զբաղում «Հարճը», որը մշակ-
 ւած է համաձայն Խորենացու հիշատակության՝ «...զի յոյժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ»:
 Խորենացու այս հակիրճ նկարագրությունից Վարուժանը ստեղծագործ վառ երևակայու-
 թյամբ հյուսել է հինգ զլուխներից բաղկացած մի վիպերգ, ասպետական վեհ սիրուն նվիրված
 հոյակապ մի կերտվածք: Ընթերցողի առջև վերականգանում է դարերի հնության մեջ անհե-
 տացած հեթանոս աշխարհը անզուսպ, համարձակ և անձնագոհ սիրո հմայքով: Վարուժանը
 «պերճալոս» գրչով, դարաշրջանին հատուկ լեզվով ու ոճով նկարագրել է անցյալն իր

բարբերով. որպես նուրբ ասեղնագործ նա պատկերել է Սյունյաց Բակուր նահապետի պալատն ու հարստությունը, խնճուղի ճոխությունն ու փարթամությունը, երկի հիմնական կոնֆլիկտը սկսվում է առաջին գլխում, երբ խնճուղի պահին Տրդատը տեսնում է հարձին պարելիս՝ Նրա կախարհիչ պարը մարմնացումն է սիրո և գեղեցկության, որի հրապույրներից հափշտակված է Տրդատը.

Ան կր ճախրե՛, կը ճախրե՛, սանձակոտոր կր ճախրե՛...
Հոգվույն մեջ՝ ծով, շուրջը՝ լույս, ան Կիպերյան Աստղիկն է՝
Որ իր շորս կողմն հավաքած աղավինները լուսեղ,
Փորձեր կ'ընեն թռչելու ինքն ալ անոնց հետ մեկտեղ,
Ու հեհեուն, ծիծաղկոտ, վարդի մը պես բուրնկած,
Վերջին թափով կը սուգի կապույտին մեջ վերասլաց,
Թողլով որ քողն ամպերեն հորձանապտույտ ինձա վար
Տիոնիսյան բազնին վրա գինիին մեջ հրավառ:

Գեղեցկությունը հաղթել է գոռ Տրդատին, նա ոտնահարելով Սյունյաց նահապետի պալատի՝ առեանգում է նրա հարձին՝ նազենիկին:

Բանաստեղծը ռոմանտիկական պաթոսով ներբողում է ասպետական դարերը, երբ հաղթանակում էր ուժը՝ հանուն սիրո և գեղեցկության: Վարուժանի այդ ամբողջ գովերգը յուրովի քննադատություն է և հակադրություն ժամանակի: Մի դեպքում իշխում էին գեղեցկություն, կյանք ու վայելք, իսկ մյուսում՝ ամեն ինչ զոհարելով էր դրամի ուժին, մոլեգնում էր նյութապաշտությունը, հռչակում մարդկային հոգին, ոչնչանում գեղեցկիկը, վսեմը, հերոսականություն, կեղծիք, հոգու և մարմնի վաճառք, — ահա թե ինչով էր բնորոշ ժամանակը.

Փառք ձեզի միշտ ավարներ, հավափումներ կիններո՛ւ՝
Որոնք տրվին իրենց տարվին ու համբույրները աղու
Առուծներու քաջության, և ո՛չ ոսկի հորթներուն,
Որոնց սիրտերն առավ լոկ սուրերու ծայրը փաղփուկ:
Փառք ձեզի միշտ, ո՛վ դարեր ասպետական կենցաղին,
Ուր մարդիկ հզոր և անկեղծ էին նրման դինիին:
Առաքինի քաջության տեղ նենգն այսօր կը տիրե.
Փոխան տեգին հոլանի՝ պատյանի մեջ դաշույնն է՝
Որ կը շողա մութի՛ն մեջ, կը ժանգոտի՝ արևին.
Ոճիրներն այդ խավարի լրոտության մեջ կը դարբնվին
Մըխտո ճրագի լույսին տակ ծրած գունատ մարդերեն:

Հոգեբանական խորությամբ ու մեծ հուզականությամբ նկարագրված է նազենիկի փախուստը՝ մերթ սիրո վայելքի հույսերով լեցուն, մերթ մոտալուտ վտանգով տազնապած: Հեղինակի գրիչը հզոր է և թափով, երբ նկարագրում է խանդի ու վրիժառության մոլեգնող կիրքը, նուրբ է և մղմ, երբ պատկերում է սիրո կարոտ զուգերի խռովքն ու տառապանքը, Նազենիկի սպանությունը: Վերջին գլուխներում դրամատիկ մեծ ուժով տրված է Տրդատի ողբերգությունը, վարձակի հուզարկավորությունը: Փոխվում է գործողությունների ընթացքը, անմիջապես փոխվում է և Տրդատի հոգեվիճակը: Չկա այլևս հետապնդում, ասելության թույլ, զայրույթ, վրիժառության մոլուցք: Հանգած են մարդկային կրքերը, հազեցած է վրիժառության ծարավը: Անտառի մեջ, խաղաղ պանդոկում, Տրդատը ողբում է իր թանկագին կորուստը: Ինչրան սեր, քնքշանք այդ ամենի, խորիստ ասպետի մեջ, ինչքան կույիծ ու սուղ սուտնջ խոսքեր:

Նվ առաջին հեղ ըլլալով ապառաժ մարդն այդ լացա՛վ...

Վարուժանի «Հարձը» իր տևակի մեջ եզակի ստեղծագործություն է, բանաստեղծական բացառիկ ուժի մի կոթող: Յուրաքանչյուր պատկեր այս վիպերգում կարծես քանդակված կուտ ամբողջություն է: Հեղինակի ստեղծագործական կարողությունը, ինքնատիպությունն ու բարձր ճաշակը փայլում է երկի յուրաքանչյուր տողում: Դժվար է ասել ո՞ր մասում է բանաստեղծի ավելի գերազանց. հարձի կրակոտ, փոթորկասլաց, նազանքներով լի պարի, թե՛ սիրահարների փախուստի հույսալիս նկարագրության մեջ: Մեկը գերազանց քան մյուսը, որպես մի ամբողջական շղթա դեպքերն ու պատկերները հաջորդում են իրար: Նվ երկեր պատահական չէ, որ «Հարձը» թարգմանվելով ֆրանսերեն՝ արժեքավորվել է որպես համաշխարհային արժեք ունեցող ստեղծագործություն:



«Հարձով» ավարտվում է «Հեթանոս երգերի» առաջին բաժինը: «Գողգոթայի ծաղիկներում» հիմնովին փոխվում է հեղինակի ստեղծագործության աշխարհը: Հեթանոս դարերի սիրո ու գեղեցկության, խրախուսանքի ու վայելքի թեմաները տեղի են տալիս իրական կյանքի վերջին ու տառապանքին, պերճ, մարմարակերտ դրվագների փարթամությունները՝ հյուղականներին ու խրճիթներին, վարդի ու նունուֆարի բուրումները՝ քրտնաթոր շապիկներին: Մեքենաների շոինդն ու եռացող կաթսաները խեղդել են գուսանական բամբակների քաղցրալուր մեղեդիները, վախճալիքի արբեցած մարդկանց փոխարեն երևան են եկել դալկահար բանվորները: «Գողգոթայի ծաղիկներում» բանաստեղծը հասնում է սոցիալական գիտակցության բարձր աստիճանի: Հասարակական պարտավորությունները գերազանցում են անձնական վշտին, որի վերքերից ավելի խորունկ ու ցավոտ էին ժողովրդի տառապանքները: «Տրտունջ» բանաստեղծության մեջ վարսեփանքը երգում է հոգին ամրացնող ու կոփող, ժողովրդին նվիրվելու վեհ գաղափարը և աշպիսով պոետը դառնում է հարստահարված ու տառապող մարդկության ջերմ պաշտպանը: «Եսապաշտ» խորուց դատարկ նրա ներքնաշխարհը այժմ լեցված է հասարակական կյանքը հուզող փոթորիկներով:

Ա՛լ հոն էի՝ ուր մորոտ խրճիթներուն մեջ մարդիկ
Կ'անիծեն լույսը վաղվան՝ որ պիտի հա՛նկարծ սառի
Իրենց քաղցեն նրվադկոտ լիրերուն մեջ մահաբաղձ:
Այնտե՛ղ էի՝ ուր բանվոր լազուկներ հանք կը պղնձեն,
Կը բանան ծոցն ոսկիին, և շարադեպ վրտանգով
Գերեզմանին կը գրտնեն, ունենալով դերթ պատանք
Պատառ պատառ շապիկին պանդխտորեն քրտնաթոր:
Այնտե՛ղ էի՝ ուր բախտին խորթ վավակներ համուռ՝
Ապրելու մեծ ու արդար իրավունքին ի խընդիր՝
Բըռնկցուցին կատարներն ոստաններուն ցասումով:

«Գողգոթայի ծաղիկների» բովանդակությունը խիստ տարբերվում է «Հեթանոս երգերից»: Հեղինակի մտահղացումների առանցքը գերազանցապես հասարակական կյանքն է: Սակայն, այս հակոտնյա բովանդակությունները հակասություններ չեն: «Հեթանոս երգերի» առաջին բաժնում դարձյալ նույն իրականության քննադատությունն է, որին բանաստեղծը դիմել է, ինչպես տեսանք, ուրույն, ո՛չ անմիջական ճանապարհով և ախտահանող նա չի՝ սահմանափակվել հեթանոս աշխարհի շրջանակներով: Ստեղծագործական այս երկրորդ շրջանում վարուժանի քնարից հնչեցին իրականությունն անմիջապես մերկացնող, նրա հետ անմիջապես բախվող քննադատությամբ լի երգեր: Կյանքը ներկայացավ բանաստեղծին իր դաժան գույններով՝ դրվանք, հալածանք, աշխատանքի անխտիր շահագործում: Ահա բանվորուհին: Կինը ալիքս, ինչպես հեթանոս դարերում, անձնագործ, վեհ սիրո և գուրգուրանքի առարկա չէ: Գոյություն պայտաքր նրան նետել է գործարան, դարձրել մեքենայի մի մասը: Ինչպիսի սիրով ու կարեկցանքով վարուժանը հետևում է գործարան գնացող բանվորուհուն: Լուսաբացի մշուշի ու լուսության միջից լսվում է նրա հյուծված կրծքի հազն ու վտիտ ոտքերի ձայնը: Նա հարստահարված է կյանքից և ուժասպառ՝ հոգսերից... բայց նա է ստեղծողը «կյանքի» ու «լույսի»՝

Եվ կը խորհիմ թե, տան մեջ, Դայրդ է հիվանդ.
Ցամքած է ձեթն ալ ճրագին.
Ու դուն կ'երթաս գործատան մեջ աշխատիլ
Լույսին համար ու կյանքին:

Բանաստեղծի աչքը զարմանալի սրատես է, յուրաքանչյուր մանրուք դիտող և արժեքավորող. նրա բանվորուհին գծագրված չէ գրչի մեկ հարվածով, այլ բազմաթիվ նուրբ թելերով է հյուսված թեկուզ և միայն նրա արտաքինը: Նա շտապում է աշխատանքի քնատ, բաղցած, իրանք մեռի՝ հովից դողացող: Եվ ցնցոտիների մեջ բանվորուհին զարդարված է վաղաբույս շաղկապով:

Եվ կը խորհիմ թե քնատ ես և նոթի.
Իրանդ հովեն կը դողա.
Եվ կը նըստի գանդուրներուդ վրա, բո՛ւյր.
Նղյամն իրրե շափուլա:

Կապիտալիստական աշխարհի ծանր պատկերները հաջորդում են միմյանց։ Ահա և «Ընկեցիլը», մարդկային հզորացած կրթի, անպատասխանատու վարքագծի դժբախտ զոհը՝ խաբված մատաղ մի աղջիկ։ Չճաշկած կյանքի երջանկությունը և չվայելած երիտասարդական անհոգ տարիները, լլկված ու անարգված, նա արդեն մայր է, սակայն դատապարտված լքելու իր հարազատ նորածնին։ Անհուն սիրով ու զգվանքով նա կրծքին է փարել փոքրիկ դժբախտին, որին ծանր պայմաններից հարկադրված թողնելու է մի անհայտ հարուստի տան շեմքին։

Վարուժանի ընտրած թեման ինքնին ծանր է և հուզիչ, բայց հեղինակի վրձնի տակ ավելի է ընդգծվել ստեղծված վիճակի ողբերգությունը։ Երկրնտրանքի, ներքին մաքառումի սրտաճմլիկ ռուպեներին, մայրական սերը մի պահ երազներով է սփռվում, ապագայի մեջ տեսնելով երջանիկ և ժպտացող օրեր իր փոքրիկի համար։ Սակայն, ցրտաշունչ ձմեռվա յուսացող առավոտը փարատում է պատրանքը. նա թողնում է երեխային և ընդմիջտ հեռանում։

Կ'երգե աբաղաղն, որդին կը ճըշա,
Զի կոպերն անոնց շողն է համբուրած։
Մայրը խելացնող, մայրը ակամա,
Ըշտապ կը փախչի... սիրտը հոն թողած։

Ընկեցիլը միակը չէ։ Փողի իշխանության մշտական զոհերն են խաբված ու լլկված մատաղ աղջիկները։ Հեղինակը ատելությամբ լեցված, անարգանքի ու զայրույթի սուր խոսքերով ներկայացնում է կապիտալիստական աշխարհը, ուր ամեն ինչ վաճառքի և առևտրի համար է։

Օ՛, այն հարուստ պարոններն, այն հրտափտները շրթեղ,
Որոնք ոսկի ցանեցին՝ որ բողբոջունը հընձեն,
Զեր հյուղերեն ներս մըտան սիրահտրի պես անմեղ,
Եվ դուրս ելան քրքրջալեն։

Զազրաթորմի ձեր մազերն՝ չոգվույս վրա կը սողան՝
Շընչելով քեն մ'արյունիս, օձերու պես թունավոր։—
Եվ ես քենո՛վ կ'անիծեմ դարուս կավատ Մարդկության
Ոսկի Հորթները բոլորը։

Այսքանով չեն ավարտվում սոցիալական շարիքները։ Բարոյական անկման, ֆիզիկական բնաջնջման ցնցող պատկերները բազմաթիվ են ու պես-պես։ Նյութական զրկանքն ու անհավասարությունը ստեղծում են կենցաղի, բարքերի անկում՝ ալյասեռում։ Աշխատանքի դժբնձ զակ պայմաններին ու աղքատությանը հավասար՝ աշխատավոր դասին սպառնում է սոցիալական մի ավերիչ շարիք՝ հարեցողությունը, որին զոհվում է մարդկային բանականությունն ու կամքը։ Վարուժանը երգեց, թե ինչպես ծերացած ու թշվառ բանվորը («Սպասում»), հոգնած, տանջված օրվա աշխատանքից, գիշերային յուրթյան մեջ ներս է խուժում իր խղճով լուռակը, հայհոյանքների առափով անարգում թշվառ ընտանիքին, որը նստած ոսպնաթանի շուրջը տագնապով ու մուսյլ խոհերով սպասում էր նրան։ Բանաստեղծի մեղադրական խոսքերը չեն ուղղված հարբած բանվորին, բնկեցիկին, խաբված կույսերին, այլ հասարակական այն կարգերին, ուր խեղվում, խորտակվում էր մարդը։

Տառապալից է և դաժան բանվորի վախճանը. նրան սպառնում է մեքենան, հանքերի պայթյունը և լավագույն դեպքում՝ քաղցի ծնունդը թորախորի Մոռացության, չքավորության մեջ է ուսավում այն մարդը, որն իր անձը վաճառել է գործարանին, հնոցի դեմ, մեքենաների առաջ ապրել է «միշտ մեռնելով», երազել կյանք, երջանկություն, և այս բոլորի փոխարեն նրան բաժին են դարձել զայրությունն ու շարագուշտ հազը։ Այսօր, գամված մահվան անկողնին, աղքատության մեջ հանգում է մի երիտասարդ, որը՝

Հանո՛ւն պառառ մը հացի՝ գործատան մեջ թաղեց ան
Ճառագայթներն հոգիին.
Տըվավ փերթ-փերթ որ ուտեն մեքենաները վիշապ
Միսերն հուժկու կրճնակին։

Արդ կը հազա՞ն, կը հազա՞ն իր զոհի գլուխը գրքած
 Ծոցին մեջ մո՛րն աղեկե՞զ՝
 Որուն կուրցած աչքերեն իսկ արտասուք կը բրխին՝
 Հողեն պրտողով ջուրին պես:

Խորն է աշխատավորության ողբերգությունը: Յուրաքանչյուրը այդ դժան իրականության մեջ տառապում է յուրովի, յուրաքանչյուրին միճակված է անխուսափելի մի ողբերգություն: Ահա Միջոն («Միջոն»), Լերիտասարդ, կենսախիղ, սիրատու ընտանիքի մի անդամ, որն անբաժանելի մի մասը: Միջոն գործարաններում կամ հանքերում աշխատող բանվոր չէ, սակայն նույն աշխարհի զոհերից է, որը մարտնչում ամենի փոթորիկի դեմ, ոչնչանում է օվկիանոսի անհունության մեջ:

Վե՛րն էր դարձյալ,— Երբ շանթեց օր մը մյուրիկն ակերոն,
 Նավուն ներքի կատաղի ցույի պես ծովը խուպաց,
 Եվ ամպրոպի մ'հարվածով կտրեցավ կայմն, ու Միջոն
 Գրկոցեցավ աստղերեն՝ անզուեղին մեջ լայնարաց:

Վարուժանը չի սահմանափակվել մահամերձ կամ հարբած բանվորների, անարգված, դրժ-բախտ կույսերի նկարագրություններով: Բանաստեղծը թափանցել է կապիտալիստական աշխարհի սրտի մեջ, նա մտել է գործարան, որը ժամանակին քիչ բանաստեղծների է հրապուրել և լշերն էին նրան ծանոթ: Վարուժանը երգել է տառապանքով ու մահվան սպառնալիքով չի աշխատանքը: Եւ յուրահատուկ լեզվական հարստությամբ ու պատկերներով՝ «Մեքենաներ» բանաստեղծության մեջ նկարագրել է գործարանի անսոսկ սև սլաքների մեջ մաշվող, արևի լույսից, օդից զուրկ բանվորների առօրյան:

Այս գեհնե՛ն մ'է, գեհնե՛ն մ'է, ուր կը հուսան, ո՛վ Ընկեր,
 Աս բանակաները կրմախք, սա բանվորները ոսին.
 Եվ միշտ ի զո՛ւր կը խրնդրեն ազատությունը օդին՝
 Որուն մեջ խլուրդն իսկ լույսով և բուրումով կ'արբենա:

Կապիտալիստական գործարանը մի ուրույն աշխարհ է, ուր ստեղծվում է կյանքը՝ «խավարին մեջ մեռնելով»։ Խառնապանքի այս աշխարհը հավասարեցնում է մարդկանց, այնտեղ մարդը «բնկեր» է դառնում մարդուն:

Բանաստեղծը աստիճանաբար, ավելի մոտից է տեսնում արհավիրքները գործարանի, ուր չիա գուժ ու կարեկցանք: Առանց խտրության, հավասարապես գործարանը կյանում է կին թև տղամարդ, մանուկ թև ծեր: Մարդկային մի հսկա բանակ գոհարելում է «Ոսկյա Հորթին»:

Հարույր հազա՞ր են անոնք.— բանակներ են զոհերու
 Զոր կը տանին միշտ Ոսկյա Հորթին առջև մորթելու:

Նրանք զոհեր են ո՛չ միայն ոսկյա հորթին, այլև սուլթանական բարբարոսություններին ու կրոնական մոլեռանդության: Նրանց արշունով են օծված Յրթողի մռայլ պատերը, Վատիկանի կամարներն ու պապի հողաթափերը: Բայց նրանք, մարդկային այդ հոծ, քաղցած զավակներն են ստեղծիչը ուժի և իմաստության: Նրանք են կերտել դարերի պատմությունը, մշակույթը: Նրանց հաղթ ուսերի վրա է հանգչում մարդկության հաղթանակը: Եվ սակայն, դրամի աշխարհում նրանց միճակված է միայն տառապանք, իսկ բաժինն է՝ ավելորդ հոշոտիչների Լրախից կորզված:

Վարուժանը բանվորական աշխարհի միայն վշտի, տառապանքի, զրկանքի երգիչ չէ, եվրոպայում նա ականատես էր ծավալվող բանվորական շարժումներին: Բանաստեղծը բանվորների հաղթ քայլերի մեջ լսում է՝ «մահազանգն ահավոր»։ Նրանց գոռոցից սարսելու է շահագործող «մարդկությունը»: Բանաստեղծը տեսնում է գալիք ժայթքող փոթորիկը՝ աղաղակ հեղափոխությունը:

Վաղն, ո՛վ Ընկեր, պիտի այս ամբարտաճան Փաղբին վրա
 Ճայթի Ամպրո՞պն, վառն հաղար ջահներն իր հըսկա...

«Գողգոթայի ծաղիկներում» որոշակի ձևավորված են հեղինակի սերը դեպի աշխատավորությունը և հաղթանակի հավատքը: «Մայիս մեկ» բանաստեղծության մեջ Վարուժանը ողջ բնությունը իր կենարար դորությունում ու հրապույրներով՝ շողշողուն արևը, մեղմ գեպուհը, ծաղկած դեղձենին, բոլորը, բոլորը, նվիրում է բանվորներին: Բանաստեղծը նրանց՝ մով նկուղների, մեքենաների և ճախարակների վրա կուցած ու հյուծված բանվորներին է համարում կլանքի կերտողները: Նա՝ տեսնում է երկու գոսակարգերի՝ իշխողի ու չահագործվողի հակասությունները և իրեն համակրանքի բարձրագույն արտահայտություն, աշխատավորության այդ մեծ տոնին, ի լուր աշխարհի, իր երգը ձոնում է նրանց:

Ահա Արեւն, արեւն ահա. լոկ ձեզի՝
Այս օր կ'նայի, կը համբուրի միայն ձե՛ր
Հակատներ.
Ան՝ բոլոր մյուս ճակատներուն վրա իշխող
է թրքեր:

Ձե՛րն են դաշտեր, ձե՛րն է Քաղաքն, որուն լուս
Փողոցներեն պետք է անցնի լոկ այս օր
Ձե՛ր թափոք,
Դրոշներ ծրփան, ծաղկին հույսեր, և գոռա
Շեփոր:

Հեղինակի հասարակական գաղափարներն ավելի վճռական ու համարձակ են հնչում «Ո՛վ դար, ո՛վ դար» բանաստեղծության մեջ: Ռուսական առաջին հեղափոխության արձագանքները հեղինակի ստեղծագործությանը հաղորդեցին նոր շունչ ու թափ: Բանաստեղծը ողջունեց հեղափոխության բարձրացող ալիքը, որն իր հուժկու հորձանքի մեջ էր առել աշխարհը: Խորտակվում էին բռնության շղթաները. որոնցով այժմ «ձաղկում» էին նրանց տերերին: Արթնադեմ է դարավոր նիրհից Արևելքը:

Մոխիրի և կապարի հրեղեն անձրև կը տեղա
Իրանին վրա:

Ամբողջ աշխարհը հղի էր հինը խորտակելու, նորը հաստատելու փոթորկով: Արևելքից մինչև արևմուտք խորտակվում էին բռնության կապանքները:

Առդին՝ արդեն ոռոտական Մարգերուն վրա կ'որոտան
Հրավերները կռվին, և խոստումներն նրազին...
Բեկոներուն մեջ ումբերն ամպերու պես կը գոռան,

Արթնացող երիտասարդ հսկաները քանդում, ավերում էին բանտերը, ոչնչացնում արքայական գալիսոնը, բռնությունն հաստատող օրենքներն ու հավատքի կուռքերը: Նոր պրոմեթեոսներ էին նրանք, ազատության, լույսի մարտիկներ: Դարը հասունացած էր իմաստությունամբ, հասունացած գիտությամբ: Մարդկային միտքն «Ընկերավար» խոսեցնում էր լուս աֆինթոսին, վերջ տալով առեղծվածներին, քուրմերի հորինած «ստության» «դիրքին»: Ժամանակը կասկածի տակ էր առնում կրոնական դոգմաները, վախեցած էր եկեղեցին, որի պաշտոնյաները փակել էին «լույս» բերանը և «լույս» ուղեղը մարդուն: Խախտված էր հպատակության ոգին: Բանաստեղծությունն ավարտվում է դալիթ «նորածագ» արշալույսի, ճնշված ու հարստահարված մարդկության պայծառ ապագայի հաղթանակի հույսերով:

Ո՛վ Դար, ո՛վ Դար, դե՛հ անցիր, և թող քու մեջ միշտ ապրին
Ջրգաձիգ մարտ, ողջակեզ, պայքար, անկում, հաղթանակ...
Հավերժության ծոցին մեջ Սափոր մ'ես, լի արշուճով,
Ե՛վ րդեղով, և՛ կամքով, և՛ զոհերու հավատքով:
Վառ հրնոց մ'ես ուրկե դուրս, ճակտին դրած Արշալույս,
Պիտի աշխարհը ելլե նորոգված ու գեղեցիկ
Եվ պիտ՝ ըլլա արժանի Արևին շուրջ դառնալուն...
Ո՛վ Դար, ո՛վ Դար հուսադեմ, դու Մարդկության Առավուտ...



Վարուժանի գրական հարուստ ժառանգության սյուսակը «Հեթանոս երգերն» է. որը նոր լույսն հաղկություն է ու ձևով նոր խոսք էր հայ գրականության սլառմունքի մեջ: Նա հանդուգն գրչով գրված, հախուռն զգացմունքներով ստեղծագործություն է՝ կյանքի ճշմարտացիության ներկայացնող մեղադրական փաստերով:

Վարուժանը շերտեր լուսաբացող վարդով ու սոխակով, երեկոն բոցավառ հորդոտով և կամ գարունը կարկաշուն առվակով ու ծաղիկներով: Բանաստեղծը չաղերսեց կույսի սեր և ոչ էլ սղաց մերժված կամ խաբված հույսերը սիրահարի: Նա հզոր քնարով երգեց սիրո և գեղեցկության հաղթանակը, նրանց նվաճող ուժը: Դիմելով անցյալին, բանաստեղծը հակադրվեց ներկային, անցյալի ներբողումով քննադատեց իրականությունը:

Վարուժանը հայ գրականության մեջ այն առաջին և եզակի դեմքերից մեկն էր, որ մեծ հավատքով ողջունեց և արձագանքեց ցարիզմի դեմ մղվող պայքարին՝ ռուսական առաջին հեղափոխությանը, որի ազդեցության տակ ծավալվում էր հեղափոխությունը և այլ երկրներում:

Ուսանելով Բելգիայում, բանաստեղծը անձամբ տեսավ և ճանաչեց կապիտալիստական աշխարհի արհավիրքները և այն մարդկային միլիոնավոր զոհերին, որոնց ժպտալու էր սակայն մաղվա ապագան: Հեղինակի երկերի այս շարքը ուժեղ ներշնչումներ էն իրական կյանքի, սոցիալական որոշակի բովանդակությամբ հագեցած:

Վարուժանի գրական ըմբռնումներն ու ճաշակը ձևավորվել են մի կողմից ազգային հեղինակների (Մրտվյան, Ալիշան), իսկ մյուս կողմից՝ համաշխարհային արվեստագետների ու գրողների (Տիցիան, Վան Դեյկ, Ժ. Ժ. Ռուսո, Տոլստոյ) ստեղծագործություններով:

«Երկու միջավայր ազդած են վրաս — Վենետիկը իր Թիցիանով և Ֆլանտրո իր Վան-Տիգենով: Առաջինի գույները և վերջինի բարբարոս իրապաշտությունը հորինած են վերածինս՝ զոր սնավառությունն ունի միայն թափառած քաղաքի մի միայն հայրենի հողին որդան կարմիրն մեջ և ծովածուփ արյանը»¹:

Բանաստեղծի այս տողերը հաստատում են նրա արվեստի ռեալիզմը, ազգային բնույթն ու ոգին:

Համարելով իրեն հետևող «իրապաշտ դպրոցի» և ընդունելով նրա գերադանջությունը գրական մնացյալ բոլոր ուղղություններից, Վարուժանը պահանջում էր գրողից անհատականություն, անկեղծություն, հրաժարում ստեղծագործական քարացած ձևերից և ամենահիմնականը՝ բովանդակության ու ձևի միասնություն գեղարվեստական երկի մեջ:

«Զարմանալի է, որ մեր մեջ,— գրում է բանաստեղծը Գ. Լեոնյանին,— չարենասիրական երկերը (նվազ բացառությամբ) գեղարվեստական արժեքն անջատ հղացված են»²: Քիչ հետո դարգացնելով իր միտքը ավելացնում է՝

«Բացի քանի մը բացառիկ պաշտելի հոգիներ (ռուսահայ թե տաճկահայ), գեռ այսօր կը վխտան հնավաճառ բանաստեղծներ, որոնց ապրանքները ո՛չ տաղաչափության և հայերեն լեզվի փառքը ունին, և ո՛չ գեղարվեստի շնորհքը: Անոնք ես կարծեմ կը ստեղծեն առանց իրենց արյունին, մինչդեռ ճշմարիտ բանաստեղծությունը մարտիրոսություն մ'է, ամեն բառի մեջ սրբոտին կաթիլ կաթիլ արյունումն է ստեղծելը»³:

Վարուժանը գրական հրապարակ մտավ իր վրա կրելով Մխիթարյանների որոշ ազդեցությունը և այն արտահայտվեց հատկապես անցյալի պատմական արժեքների գերազնուհատման հարցերում և հակումներով դեպի դարբարը: Կարճ ժամանակում հեղինակի հզոր տաղանդը հաղթահարեց հին տրագիկաները՝ հարթելով ստեղծագործական միանգամայն նոր և ուրույն ուղի: Սխալ է այն կանխակալ կարծիքը, թե Վարուժանը գրաբարի հետևող է: Գրաբարը նրա համար այն անսպառ շտեմարանն էր, որի օգնությամբ բանաստեղծը գիմել է նյութի պահանջից թելադրված, երբ այդ գրաբարը մի ներդաշնակ ամբողջություն է կազմել Կրկի բովանդակության հետ, ինչպես «Հեթանոս երգերում»: Այս առթիվ ուշագրավ են բանաստեղծի գիտողությունները Միամանթոյի դյուցազններգությունների մասին:

«Իր դյուցազները ես կարծեմ ավելի հզոր պիտի ըլլային, եթե ղանոնը քիչ մը ավելի

1 Դանիել Վարուժան, Երկեր, Երևան, 1946, էջ 421:

2 Նույն տեղում, էջ 424—425:

3 Նույն տեղում, էջ 425:

Հազվեցներ գրաբարին պղնձի բովեն հանված զենուզարդով, մարտագոռ բառերով, հստակ ասացվածքներով: Այն ասեն պիտի տեսներ, որ նոր բառեր կերտելու ձանձրույթին ալ տեղի պիտի շմնար այլևս»¹:

Ինչպես տեսնում ենք, Վարուժանը գեմ է ինքնահնար, ինքնաստեղծ բառերի, իսկ գրաբարի գործածությունը նրա համար անցյալի երկրպագում, կամ գրաբարամոլության արտահայտություն չէ: Մեր պնդումների լավագույն փաստարկը նույն «Հեթանոս երգերի»՝ «Գողգոթայի ծաղիկներ» բանաստեղծությունների շարքն է, ուր հեղինակի լեզվի, մտածողության և պատկերների ստեղծման արվեստը դրսևորվում է մեծ պարզությամբ ու հստակությամբ: «Գողգոթայի ծաղիկները» գրված են ժամանակակից կենդանի լեզվով, որը պայմանավորված է երկի բովանդակությամբ:

Վարուժանի ստեղծագործության հատկանիշներից մեկն է լեզվի հարուստ պատկերավորությունը, որը հաճախ հասնում է անգերազանցելի վարպետության: Բանաստեղծի պոեզիայում պատկերները ինքնանպատակ, անբովանդակ կրկնություններ չեն, հնացած ձևերով: Նրանք իմաստավորված են և հեղինակի անհատականության ուժեղ գրոշմով թրծված: Պատկերների ճոխության, բազմազանության, լեզվի հարստության հետ միասին Վարուժանին բնորոշ է պարզությունն ու անմիջականությունը, ինչպես և գեղարվեստական չափի բացահայտ զգացողությունը: Նա ամենահակիրճ տողերի, ամենապարզ խոսքերի մեջ խտացրել է մարդկային հոգեվիճակի բարդ ապրումներն ու անցումները՝ ընդհանրացնող մեծ կարողությամբ: Ահա «Առկայծ ճրագ» փոքրիկ բանաստեղծությունը. Երեկոյան սպասվում է կովից հաղթական վերադարձող որդին: Մութը փարատելու և նրան դիմավորելու համար հարսը պատրաստում է լամպը, յուղով լեցնում, պատրույգը մարում: Գայիս է վերջապես ցանկալի սայլը, բայց... որդու փոխարեն բերում է նրա գիակը:

Հաղթանակի գիշերն է այս տոնական,—

Հա՛րս, եղ լեցուր ճրագին:

Պիտի դառնա կռվեն տրդաս հաղթական.—

Հա՛րս, քիթը ա՛ռ պատրույգին:

Սայլ մը կեցավ դրռան առջև, հորին բով.—

Հա՛րս, վառե՛ լույսը ճրագին:

Տրդաս կու գա ճականտ հըպարտ դափնիով.—

Հա՛րս, բե՛ր ճրագը շեմին:

Բայց... ոայլին վրա արյո՞ւն և սո՞ւղ բեռքեր են...

Հա՛րս, ճրագդ ասդի՛ն երկարե:

Հերոս տրդաս հոն զարնրված է սրտեն.—

Ա՛խ, հա՛րս, ճրագդ մարե՛...

Շատ է երգվել հերոսաբար սպանված մարտիկի մահը, ծնողների սուգը, սպասումը, կարոտն ու խորտակված հույսերը նորահարսի, բայց Վարուժանի «Առկայծ ճրագը» աչքի է ընկնում արտասովոր ինքնատիպությամբ և մանավանդ զարմանալի պարզությամբ, մեծ բովանդակություն արտահայտող այն պարզությամբ, որը հատուկ է հեղինակի մի շարք բանաստեղծություններին, ինչպես օրինակ, «Կարոտի նամակը», «Հին սերը», «Սպասումը» և այլն: Պարզ, անպաճույճ տողերով են ներկայացված հարավատների պատրաստությունն ու անհամբերությունը և նրանց հաջորդող ահավոր անակնկալը: Չկա խոսքերի պերճ շարադրանք, պատկերների հարստություն, հուզումի կսկծալի տեսարաններ: Հույսն ու հուսախաբությունը, ուրախությունն ու վիշտը անմիջապես են հաջորդում միմյանց և այս բոլորի արտահայտիչն է առկայծող ճրագը, որ վառում է կարոտակեղ հարսը տենդոտ սպասումով և խսկուն մարտն հանգչող կյանքի հետ:

Օժտված ստեղծագործական բացառիկ կարողություններով, Վարուժանը և մեծ հայրենասեր բանաստեղծ է: Աբովյանը, Ալիշանը, Պեշիկթաշյանը իրենց ազգանվեր գործունեությամբ ու հայրենասիրական հոգեպարար երկերով, Վարուժանի համար նվիրական հիշատակներ էին: Հայրենիքից հեռու, օտարության մեջ բանաստեղծը ապրեց իր ժողովրդի հետ և որպես հումա-

¹ Գ. Վարուժան, Երկեր, էջ 361:

Նրան-գեմորատ ունկնդրեց նրա տառապանքներին, երգեց նրա աշխատանքը՝ «Արտերուն հրավերը», «Յորվանի ծովերն» ու «Կալերու գիշերը»: Երգեց հարստահարված մարդկության պաշտարը, որից հոսեցին էր լուսավոր ապագան:

«ЯЗЫЧЕСКИЕ ПЕСНИ» ДАНИЕЛА ВАРУЖАНА

АЛИС МАНУКЯН

(Р е з ю м е)

Даниел Варужан, один из крупнейших представителей армянской поэзии, проложил своим своеобразным талантом новый путь в западно-армянской литературе. Прожив недолгую жизнь, он оставил богатое наследство, явившееся эхом той общественно-политической обстановки, в которой жил поэт.

Разочаровавшись в действительности, где эксплуатировали слабого и торговали нравственностью, где была подавлена всякая свобода, поэт воспел в «Языческих песнях» языческое прошлое, рыцарские века и настоящее, полное борьбы и светлых надежд на будущее. В далеком прошлом рыцарских веков увидел он девственные чувства, жизнь, наслаждение, торжество любви и красоты. Варужан проник творческой фантазией в туман веков, противопоставив ничтожному настоящему исчезнувший мир.

В «Цветах голгофы», II части «Языческих песен», в ярких и острых красках отражены противоречия капиталистического мира. Жизнь предстает перед поэтом в ее жестоких красках, с ее лишениями, угнетением и всеобщей эксплуатацией труда. Несчастными жертвами капитализма являются «Подкидыш», «Работница», «Умирающий рабочий», которым угрожают машина, взрывы шахт и, в лучшем случае, туберкулез, порождаемый голодом.

В годы учебы в Бельгии Варужан был очевидцем развернувшихся в Европе мощных рабочих движений. В «Цветах голгофы» ярче оформилась любовь автора к трудящимся, его вера в победу их борьбы. В армянской литературе он был одним из первых, творчество которого под влиянием первой русской революции прониклось новым дыханием. Сильным художественным словом приветствовал он поднявшуюся волну революции, охватившей в стремительном водовороте мир.

«Языческие песни» как по содержанию, так и по форме явились новым словом в истории армянской литературы. Они написаны бурными чувствами, смелы в своих разоблачениях и правдиво представляют мир обвинительными фактами.

Литературная жизнь Варужана была сложной и трудной. Он сумел преодолеть некоторое идейное влияние мхитаристов, сказавшееся на первом периоде творчества, и жил настоящим.

Наделенный исключительными творческими способностями, Варужан был также большим патриотом. Вдали от родины, на чужбине, он прислушивался к страданиям народа и, как демократ-гуманист, воспел его труд, борьбу эксплуатируемого человечества и его светлое будущее.